

զակ քօզաքնեբով կը պահանջէ խո-
նարհուոյ գահը : Կոյր ու տղէտ ամ-
փխը դեռ ասեն մը եւս չը հակնար
իր իսկական փրկարարները . եւ յի-
մարօրէն կը հայածէ զանոնք : Բայց
գրիակցութեան յուսատու զանգը
հնչած է մեծամասնութեան մէջ :

Այս պահուս հեղ մըն ալ . երկ-
րորդ անգամը ըլլալով . յեղափոխա-
կան բողոքը մարեցաւ . կամ . զէթ
այնպէս կը թուի :

Ռուսականին նման հսկայ զանգ-
ուածի մը համար Ազատութեան մէկ
հարուածով կամ մէկ քայլով չը տի-
րացուիր... Կոհակները մէկ էջ ու
բարձրաւումով չեն խորտակեր նա-
ւերը : Տոնեակ եւ տասնեակ բազ-
մաւորներէ վերջ է միայն որ պատ-
նչները կը քանդուին...

Յեղափոխութեան լուծիւնը եւ
բանարդեան գործի վերսկսումը կը
նկատուի ոմանց կողմէ անժամանակ-
եայ զինագուլ . զինագուլ մը նրկ-
ամսեայ կամ քիչ աւելի . նոր ոյժով
եւ նոր կազմութեամբ բազուկներով
դիմագրուելու համար թշնամին :

Յաւի ու փոթորիկի գիշերուան կը
յաջորդէ պայծառ Արշալոյսը :

Մ. Յոյակ

ԴԵՊՈՒՆԸ ՈՒ ՃՈՅՏԵՐԸ ԹԻՖԼԻՉՈՒՄ

Կեանքը մեռած է թիֆլիզում .
Ընդհանուր գործադուլը մեռելու-
թեան դրոշմ է դրել ամեն կողմ .
փակ են բոլոր խանութները . հիմ-
նարկութիւնները . տրամալար . եր-
կաթուղին դադարել են գործելուց .
փողոցներում հրապարակներում չը
կայ սովորական շարժումը :

Մարդիկ վախենում են տանից
դուրս գալ . որովհետեւ մէկը միւս-
սից աւելի սպանակաւ ու յուզիչ
լուրեր են պտտում :

—Այս ինչ տեղերում ուղեւոր են
զցելու . ասում են ոմանք :

—Ձինուորներին ու կողակներին

ՍԷՍԻԼԻԱ Մ. ՊԼԵՑԻ
26
Դ Ե Ք Ի
Հայկական Ռոման մը
(Թարգմանութիւն Անգլիերէնէ)
Գ. Ժ. Ժ.
Կենդանի թԱՂՈՒԱՄ

Արդեօք պահանջներս կը խաբէին
զիս : Յիրախ' պարապ կը հնչէր
այն . . . Ո՛հ . Աստուած . պարապ .
կրկին ու կրկին հնչեցուցի Ո՛հ . սը-
խալմունք չկար . Աստուած ետին բաց
էր ինչ որ ալ ըլլար . ուր որ ալ
տանէր այդ . . . սակայն . դուռը
բանալու համար ու է տեսանի մի-
ջոց մը չկար . Բարախուն սրտով հրե-
ցի զայն . զարկի . կոնակովս մշտեցի .
բոլոր ջանքեյս անօգուտ . կերելէին .
կոր կերպով հոռոշեցի . ընտ այսքան
ալ յաջողութեան մտենալէ վերջ» կը
խորհէի . Բոլորովին ձեռք քաշելէ
առաջ մտադրեցի վերջին ճիգ մ'ալ
ընել կրկին կանակս դրան դրի ու
քովս սիւնը բռնելով ամբողջ ու-
ժովս հրեցի զայն . Ձեռքս կոշտի մը
գունտի մը դպաւ . Յաջորդ բոպէին .

հրամայուած է անխնայ կոտորել բո-
լոր պատահողներին . ասում են ու-
րիշները . եթէ մի որ եւ է տեղում
ուղեւոր տրաքոց լսուի :

Եւ այդպիսի լուրերից սարսափած
փափկանկատ հասարակութիւնը փակ
ուղեւորներու . անհամբեր սպա-
սելով իրարազ ու հանգիստ ապա-
գային :

Նա միայն սպասում է...

Հոկտեմբերի 18ն է . մի գեղեցիկ .
արեւ օր . Բայց բնութեան գեղեց-
կութիւնը կարծես կորցրել է իր հը-
մայքը մարդկանց աչքում . Իրանք տը
խուր են . նրանք վախենում են ար-
իւնտ փոթորիկի բռնկուելուց .

Բայց ահա ժամը մօտ Աին կայ-
ձակի արագութեամբ աստուծու է
քաղաքի մէկ ծայրից մինչեւ միւսը
սենսասիօն լուրը .

—Կայսրը մանիֆէստ է հրատարա-
կել . խոսքի . ժողովների հատարեալ
ազատութիւն տուել ընտրողական ի
րաւունքի հետ միասին . . .

Եւ տխրութեան քօղը վերանում է
ժողովրդի երեսից . տեղի տալով հրճ
ուանքի արտայայտութեան :

Ազատութիւն—այնքան սեւ ու
ծանր օրերից յետոյ . ազատութիւն
—ձեռք բերած բուն ժողովրդի ար-
իւնտ ջանքերով . արժէր դրա հա-
մար հրճուել . ուրախանալ :

Մի երկու ժամ եւս—եւ ահա փո-
ղոցները թնգում են հեռագրապա-
ճանների բացականչութիւններից :

—Նոր հեռագրիւններ... մանի-
ֆէստը...

Եւ հայոց . ուսուց ու վրաց լրա-
գիրները էկատոր-յաւելուածները բե-
րում են մանիֆէստի բովանդակու-
թիւնը՝ ժողովրդի լայն խաւերին ա-
ւետելու :

Ամեն կողմից լսում են ուրախու-
թեան բացականչութիւններ :

Ժամը մօտ չորսին Գօլովինսկի
պրօպագանդա մի արտասովոր կերպա-
րանք է ընդունում :

մթութեան մէջ . կռնակի վրայ պառ-
կած էի . և մուտքը մեծաշունչ ազ-
մուկով ետեւէս գոցուած էր :

Բաւական հեռուն նետուած ըլլա-
լու էի . քանի որ չեմ գիտեր որքան
անզգայ յիսալ :

Վերջապէս արթնցայ . Երանի' թէ
չարժնայի . Երկար տենչացած
գաղտնիքս գտած էի . բայց . . . ափ-
սո՛ս . կենդանի տապա՛ն մը . . .

ԳԼ ԺԵ .

ԿԵԱՆՔԻ ԵՒ ՍԻՐՈՅ ՀԱՍՄԻ

Մահը՝ որմէ կը խուսափէի . գտած
էի . Բայց . ո՛հ . այսպիսի՛ մահ մը . . .
հատնի'ր . տակաւ առ տակաւ . որ քստ
օրէ . զգալի սը ծաղիկ հոգեոյժ ջերմ
տրոփուները կը պաղին . կը սկա
րանան ամէն ժամ . վերջին նուազուն
հեղք չնչն պօքայի սողուններուն
միջեւ . Ափսո՛ս աւա՛ղ . Դաշնին ու
թոյնը . հօրս անուի ընծաները . ասոր
մօտ երջանկութիւն էին . . .

Սակայն այդ գորհուրելի մտածու-
նեբուն տեղի չը տուի : Որքան ալ
անյոյս ըլլային ջանքերս . պէտք էր
ոտքի ելլէի : Պէտք էր մաքառիլ
կեանքի համար . քանի որ գտն կեանքը
կը տեւեր . զուցէ այս միջոցով մահը
աւելի շուտ գար : Պ՛՛հ . Միքէս . ո՛հ .

Ձինուորական դատարանի առաջ
կանգնած են դրագուն զինուորների
չարքերը՝ իրանց կարմիր գլխարկնե-
րով . նրանցից քիչ առաջ . զէպի Փա-
ռաց Տաճարը երեւում են զինուոր-
ների եռակի շղթաները՝ իրանց պս-
պղուն սուրներով . իսկ հետուից
չարժուած է մարդկանց մի հոծ բազ-
մութիւն՝ կարմիր դրօշակներով եւ
որոտընդոտ բացականչութիւննե-
րով :

Կեցցէ՛ ազատութիւնը...
—Կեցցէ՛ . կեցցէ՛ կրկնում է ար-
ձագանքը :

Ահա մօտենում թափօրը սուրինե-
րին եւ կանգնում Փառաց տաճարի
առաջ ու նորից բռնկում են կեց-
ցէներին ու շուտաների բացական-
չութիւնները . նորից լսում են՝
«Կորչի» . «գօլօյ» . «ձրս» . . . կայր
եւ ապա տիրում է բուպէական լու-
թիւն :

Ահա մարդկային ուսերի վրայ
կանգնում է ճառախօսը եւ սկսում է
իր խօսքը օրուայ զէպի մասին .
Առաջինից յետոյ բարձրանում է
երկրորդ ճառախօսը . ապա երրորդը .
չորրորդը եւ այդպէս շարունակուած
է մինչեւ ժամը 6 եւ կէսը :

Խօսում են ուսերէն . վրացերէն .
հայերէն . քննադատութեան ենթար-
կում անցելով . կառավարութեան
ընթացքը . արիւնտ գէպերը . ալ
տիւ ուժերի անձնագոհութիւնը եւ
չեչուած . որ այս աօնը ժողովրդա-
կան յաղթանակի տուն է . որ դա ըն-
կած գնդի արեան արդիւնքն է .
որ նոյնանման ջանքերը պէտք է շա-
րունակուեն . մինչեւ զայ լաւագոյն
ապագան եւ տիրապետէ արդարու-
թեան ու հաւասարութեան սկզբուն-
քը :

Այդ բոլորին ունկնդիր է կարմիր
դրօշակները շրջապատող ժողովուրդը
իսկ նրա հետ միասին նաեւ շղթաներ
կազմող զօրքը իր առաջնորդներով .
Ահա վերջապէս զօրքի կողմից ա-
ռաջ է շարժուած թիֆլիզի նահանգա-
պետ գեներալ Ժիլիան շորս հեծեալ
զինուորների եւ մի օֆիցերի ուղեկ .

խեղճ հայր իմ . ո՛հ . Միւ . . . —բայց
իմ ազգուեն շրթունքներս չը կրցան
արտասանել այդ բառը—«Միւսք բար-
եա՛ւ—երկար . վերջին միտքս արեւու
մը Ո՛հ . արեւ . լուսին ու աստղեր .
միտք բարեաւ . . . Աչքերս փակ են ձեզ
համար յաւիտեան . . .» Եւ յուսահատ
տագնապով մը . արցունքի խոշոր
տաք շիթեր աշտերուս վրայէն վար
սահելով՝ ձեռքերուս վրայ ինկան :

Հետզհետէ այս վշտի ու յուսահա-
տութեան քորքոքումս անցաւ . Այն
աղօթքը . որ երկար շաբաթներ ան-
բաժան ընկերս եղած էր . կրկին վե-
րադարձաւ . —Ո՛հ . Աստուած . ապ-
րի՛մ . . . ու այս բառերը արտասանե-
լէս առաջ . ներքին ձայն իր խօսե-
ցաւ ինձ . որուն ձայնը հրամայական
էր . —Ինչ կրնես . ո՛վ ախարհի զա-
ւակ . Ոտքի ելի՛ր . . . ապրէ՛ . . .» Հրճ
ուելով ու խրախուսուելով այս երկ
նային հրամանէն—իր ծագումին մա-
սին չէի տարակուսէր—գոնարու-
թեամբ ոտքի ելայ . ջիլիանս յիբաւի .
բովանդակ մարմինս փայտացած .
ճգմուած էր ինչապէս պատճառով ու
կրցում էր . Բայց կամքը գորութիւնը
ստժ անխորտակելի էր մէջս . Տարա-
ձելով ձեռքերս՝ պատ մը գտայ—
ինչ որ կենթադրէի . —ու ասոր կոթ-
նեցայ . Թանձր մթութեան մէջ էի .
Խնամքով պատրաստուած կանթեղս .

ցութեամբ .
Նա բարձրանում է Փառաց Տաճա-
րի սանդուխտների վրայ եւ յայտա-
բարում . որ նոյն իսկ ամենազատ
պետութիւնների մէջ գիշերները բա-
ցօղեայ ժողովներ չեն անում . ուստի
եւ հարկաւոր է ցրուել . . .

Նորից խօսում են երկու ճառա-
խօսներ եւ ապա բազմութիւնը Վար-
սէյլեօզ՝ երգելով եւ խորտա բացա-
կանութիւններով հեռանում է՝ հե-
տեւեալ օրը հաւաքուելու պայմանով :

Լուսանում է . Սկսում է փողոց-
ներում շարժում . կեղանութիւն .
Ուրախութեան ժպիտը փայլում է
մարդկանց երեսներին . Ոմանց կուրծ-
քը կամ թեւերն են զարդարուած
կարմիր կտորի նշաններով . ոմանք էլ
վզերն են փաթաթել կարմիր շարֆեր .
Ժամը 10ից առանձին—առանձին
խմբերով . երգելով ու բացականչու-
թիւններով տարբեր կուսակցութիւն
ների մարդիկ հաւաքուած են Գօլօ-
վինսկի պրօպագանդա վրայ :

Սօցէալ դեմօկրատները . սօցիա-
լիստ յեղափոխականները եւ վրաց
ֆրոնտալիստ ալիքարմուկներն ու Հայ
յեղ . զաշնակցութիւնը . Իւրաքանչ-
իւրն ունի իր դրօշակները—համա-
պատասխան մակարութիւններով .
Անոնց պրօպագանդա՝ Այնքանորեան
այդու անկիւնից մինչեւ «Ռազիօն»
նահա Բօլթան լցում է խուռն բազ-
մութեամբ . Մանր ու խոշոր բազմա-
թիւ դրօշակները ծածանում են փո-
ղոցի մի ծայրից մինչեւ միւսը եւ վե-
հաշուք կերպարանք տալիս ամբողջ
տեսարանին .

Ահա բարձրանում են ճառախօս-
ները միաժամանակ մի քանի տեղե-
րում եւ իւրաքանչիւրն իր կուսակ-
ցութեան ծրագրի ու ձգտումների հա-
մաձայն բացատրում է օրուայ նշանա-
կութիւնն ու անցեալ զէպերի ար-
ժէքը . Առաջին ճառախօսներին փո-
խարինում են երկրորդները . ապա
երրորդները . չորրորդները եւ այդ-
պէս անվերջ ամբողջ օրուայ ընթաց-

որ բերած էի . զնդանին դուրսի կողմն
էր . իսկ լուցկիները . . .

Ձեռքերս գրպանս խօթեցի : Ինչով
կրնամ իմ երախտագիտութիւնս
յայտնել . տուփը . լեփ լեցուն՝ հո՛ն
էր . . . հատ մը վառեցի : Իր սկար
լոյսով նկատեցի վեց լայն մարմարէ
սանդուխտներ . նման՝ և քնակաւոր
շարունակութիւնը անոնց՝ որոնք
վերը զիս զէպի աւերակները առաջ-
նորդած էին . սակայն երկու կողմէն
մէկ—մէկ պատ ամեն հաղորդակցու-
թեան միջոց փակած էր . Ուրիշ
լուցկի մը ինձ ցոյց տուաւ որ բա-
ւական լայն գաթակի մը վրայ ին-
կած եմ . գոցուած այն պատով . ո-
րուն ապակին կոխած էի . եւ որն .
նեղ բացուածքի մը բացառութեամբ .
որուն մէջէն մէկ հոգի մը հազիւ
կրնար անցնիլ . միանալով միւս պա-
տին՝ քառակուսի մը կը կազմէր :

Որոշումներս շուտով ըլլալու էին .
բայց որքան որ կրնայի արամբա-
նել . այս քառակուսի միջոցը ներք-
նաւենեակի նման բան մը ըլլալու էր .
որ զէպի ուրիշ բաժին մը կառաջ-
նորդէր : Այն դուռը . որուն մէջէն
ինկած էի . ճիշդ առջեւս էր . վեց
սանդուխտներուն գլուխը . կարծէ . կը
խորհէի . ուրիշ փորձ մ'ալ ընել կեան-
քի և ազատութեան համար . Ինքեւի
ձակը մտնելէս առաջ . որ միակ տե-

ԿԱՏԱՐԵՒՔ ՄԵՐ ԽՈՍՏՈՒՍԸ

Անցեալները մենք յայտարարեցինք որ «Հայրենիք» խմբագիր Վառամբանը հակառակ սուտաբան է և յեղափոխութեան գրամները ոչ միայն իրեն այլ և իւրայիններ զրա ծախուղ, ինքնադրութեան և խոստացանք այդպէս ցոյցով զօկրմաններով Վառամբան, հօտեւելով «Հորիզոն» խմբագրութեան օրինակին, թէ և ինքը մօտիկից ամեն ինչ լաւ ծանօթութիւնով է տալիս իրեն շփուցած մանուկի նման ստի գիտելիքով Գառնիկեան մէջ ունեցած դիրքը անկարելիութեան հասցնելու որպէսզի, իր սփեւտական տրամաբանութեամբ, աւսածներն ու ժը կոտրէ: «Վարդօն» պարզ գործիչ մը եղեր է, ոչ մէկ կարելի մարմին անդամ յայտարարում է Վառամբան. իր թերթի միջոցով:

Դա այնպիսի մի հակառակ և լիբը սուտ է, որին միայն Վառամբանը ընդունակ է:

Իսկ յայտնենք որ 96 թուականի սկզբից ես եղել եմ երկրի Վիշապի վարիչ մարմնի վարչապետ անդամներից մին. ժամանակի մի մասը Բուրջարիում անցնելով և շարունակ թըլ թակցութեամբ խորհրդակցելով այդ մարմնի հետ, որոնց կազմից ինձ հետ յարաբերութիւններ պահպանում էինք ինքը Վառամբանը, իսկ մի քանի ամիսը հենց Վիշապի մէջ... ուր կատարվեց այն գործը, որի շնորհիւ

Գառնիկեանները մէջտեղ եկաւ իրեն ուժեղ յեղափոխական կազմակերպութիւն. Վիշապում, երբ Վառամբանը նապաստակի պէս ծակէ ծակ էր մտնում ես մասնակցում էի բոլոր այն ժողովներին, որոնց մասնակցողները պէտք է կատարէին իրենց առջեւ դրված հակառակ գործը: Երբ սուրբ եմ որ Վառամբան յանդգնութեամբ չի ունենայ ժխտելու այս իրականութիւնը և ստիպելու ինձ հրապարակ գրել նամակներ, որոնք զուտ յեղափոխական բնոյթ ունին:

97 ից մինչև 98 ի ընդհանուր ժողովը ես եղել եմ Արեւմտեան բիւրօյի անդամ իրեն հետ միասին, ինքը միայն և ես շրջուն, իմ ցանկութեամբ, սակայն կարելի էր պարագաներում միշտ պարտաւոր ժընձվ գտնվելու. այդ պայմաններում համարմենք նորից կը գիտենք հանգուցեալ Գրիստափորի նամակի վկայութեանը որ հետեւեալն է:

Ընդհանուր ժողովը, խօսելով արտասահմանի մասին, գտաւ որ հարկաւոր է ուժեղացնել և կանոնաւոր կազմակերպութեան ներկայացուցչութիւն հաստատել արտասահմանում, այդ նպատակաւ ուժեղացնել խմբագրութիւնը, հաստատել այնտեղ խմբագրութիւնը, հաստատել այնտեղ խմբագրութիւնը, հարկաւոր դէպքերում (քանակութիւններ միջոցին) ներկայացուցիչ հանդիսանար կազմակերպութեան կողմից և վերջապէս Եւրոպայի, Եւրոպական Տնտեսական և տնտեսական ծովագետաց քաղաքների վերաբերմամբ կատարէր Բիւրօյի սովորական գերը: Այնու հետ ժողովը որ բազմա-

մարդ էր, չը կամենալով անձեռնարկութիւնների ընտրութիւն անել, յանձնեց մեծ քաղաքի և Ոսկանասպտի խմբերին կազմակերպել այդ խմբագրութիւնը, (Փակագծի մէջ ասենք որ այդ ժողովին ԻՊՇԱԿ-ի խմբագրութիւնը ժընձվից ինձ ուղարկեց պատգամաւոր):

Ժողովը ցրուելուց յետոյ շատ խօսեցինք շատ վիճեցինք և վերջապէս երկու խմբերս որոշեցինք ընտրել Ծ հոգի. մեր կողմից մենք ընտրեցինք Գրիստափոր և Վահագնի (Վառամբան) իբր անփոխարինելի անդամներ իսկ Արվախի, Գարոյի և Հրաչի իբրեւ ընտրված թիկնածուներ մեր կողմից— բոլորն մինչև հետեւեալ ընդհանուր ժողովը: Արտասահմանին թողինք թիկնածուների վերաբերմամբ անել ինչ անսակ փոփոխութիւններ այդտեղ յարմար կը գտնուին:

Եւ մարմնի այս ձևով կազմը ընդունվեց մեր Վառամբանի մէջ հաւաքուած արտասահմանեան ընկերների ժողովի կողմից:

Սրանից պարզ է որ ես Վիշապի գործերի վարիչներից մէկն եմ եղել նրա գործունէութեան ամենափայլուն և բարդ միջոցում: Արեւմտեան բիւրօյի անդամ եմ եղել, երբ նրա առջև գրվում էր խոշոր գործունէութեան մի նոր ծրագիր:

98 ի ընդհանուր ժողովից յետոյ արդէն ես եմ խոսափել որ և է պատասխանատու գերատեսչանել և չը նայելով դրան, չը նայելով հանգուցեալ Գրիստափորի հետ խիստ ընդհարմանս միշտ խոչընդոտեալ կազմակերպութիւններ է պահպանվել ինձ հետ Արեւմտեան բիւրօյի անդամների, Վիշապի, Ոսկանասպտի մարմինների կողմից: Գառնիկեանները և և կարելի էր գործ, ընկերական

քում. Մերթ ընդ մերթ օգը դրողում է որոտնդոտ բացականչութիւնները «Կեցցէ», «Կորչի», եւն.

Երկրորդն ժամը մօտ 3ին նահանգապետը զալիս յայտնում է փոխարքայի կողմից, որպէսզի պատգամաւորներ ուղարկեն ժողովների ցանկութիւնը յայտնելու. Դնում են 10 հոգի սօցիալ դեմոկրատներին, Հ. Յ. Գառնիկեանին, Սաքարթվելոի և Սօցիալիստ յեղափոխականների կողմից եւ ընդհանուր համաձայնութեամբ ընում հետեւեալ պահանջները:

1. Վերացնել գինւորական դրութիւնը.
 2. Վերացնել էկզեկուցիան.
 3. Ազատել քաղաքական յանցարեւներին.
 4. Իտտել հայ-թուրքական կոտորածի հեղինակներին.
- Փոխարքան լսում է այդ պահանջները համապատասխան բացատրութիւններով եւ պատասխանում, որ գինւորական դրութիւնն ու էկզեկուցիան կը վերացնի. հենց որ կարգ ու խաղաղութիւն հաստատուի, քաղաքական յանցարեւները 69 հոգի նոյն առաւօտը ազատուած են, բացի այն անձներից, որոնք մեղադրուած են ուսուցիչ պահելու, ձգելու եւ զուտ յեղափոխական պրօպագանդայի համար.

Ոսակցութիւնը տեւում է կէս ժամից աւելի. Դրանից յետոյ պատգամաւորները վերադառնում են եւ ժողովրդին յայտնում փոխարքայի պատասխանը. ապա նորից սկսվում են ճառախօսութիւնները, որից յետոյ երգերով ու բացականչութիւններով ցրում են՝ նախ գառնիկեանները սաքարթվելոսներին ու սօցիալիստ-յեղափոխականներին հետ եւ ապա սօցիալ-դեմոկրատները:

Այսպէս անցնում է երրորդ օրը.

(Շարունակելի)

սանելի ելքն էր կանգնած տեղէս. Ուստի, վեց աստիճաններէն վեր մակցեցայ, կարելի եղածին չափ լուցկիներս խնայելով, որպէսզի դրան վրայ հարկաւոր քննութիւնները կատարէի անոնցմով. Ոչ նիգ ունէր և ո՛չ ալ սողնակ, ո՛չ կղպանք և ո՛չ ալ մղակ. զայն բանալու համար տեսանելի միջոց մը չկար. Շատ հաւանական է դուրսի կողմի նման քաղաքի զսպանակ մը կար, բայց որ միայն բաղադր կարելի էր գտնել. Հեռացած պահուս խոր հռաչք մը հանեցի. Ուրիշ յոյս չկար այլուս, բայց եթէ միայն այն անցըր՝ որ եթէ կարելի է ըսել, եղած տեղէս ալ աւելի մութ էր. Անհասելի զգանք մը զգացի հող մտնելու համար. Տակաւին վստահ չէի որ ասիկա ալ զէպի մահ առաջնորդող ծակ մը չէր:

Վերջապէս, խորհելով թէ հոս կամ հոն մեռնիլը միեւնոյնն է, լուցկի մը վստահով գողգողալով և զգուշութեամբ մօտեցայ—խիստ զգուշութեամբ հիմա, Լուցկիները ալ զեօք այնքան թանկ եղած էին երբէք. կեանք կամ մահ անոնցմէ կախուած էր այժմ. Թններով պատէն, նեղ ծակէն վար՝ զէպի անյատակ մթութիւնը նայեցայ. Վար... վար... վար... Ուրիշ տկար լոյս մը պարզեց երեք նեղ սանդուխներ և սթացու-

թեամբ և կեղտով խոնաւցած էին, և վտանգալի կերպով սահուն կրնային ըլլալ Բան մը չկար իջնալ ողնելու—ոչինչ ընկելու. Աւելի լաւ էր երկրի խորշերուն մէջ մտնել. քան թէ այդ սանդուխներէն իջնելու փորձ մը ընել Սարսաղով ետիս դարձայ: Մահացուցիչ նողկանք մը պաշարեց զիս.—«Յոյս չկայ—երբէք, Լաւ է որ եղած տեղս մեռնիմ. կը խորհիլ»:


Այսուամենայնիւ, պահ մը վերջը, անբացատրելի մղած մը ազդեցութեան օակ, դրան դարձայ ու ստքս առաջին աստիճանին վրայ գնելով՝ դուրսի խաւարը մտայ քաջաբար: Վերջին լուցկի մը ցոյց տուաւ որ բոլորն ալ ուղղահայեց էին, այս պէս կը տրամաբանէի—ինչ յիմարութիւն տրամաբանութեան մասին խօսիլ—ու այն գրգռումը, որ մղած էր զիս ստքս սանդուխին վրայ գնել ու խաւարը մտնել, զիս ապահովուց, որ ձեռքերու և ոտքերու օգնութեամբ անյողողող ու զգուշաւոր կամքով ապահով պիտի կրնամ յատակը հասնիլ. Եւ ոչ ալ խառնեցայ, նկարագրուածս աւելի կարճ ժամանակում, արդէն յատակը հասած էի և հեռաւոր խաւարը նայող անհամար աստիճաններուն վրայ նստած... Այ հիմա վախ չունէի. Այն անտէ-

ազդեցութիւնը, որ զիս աներկիւզ վար դրկած էր տակաւին վրաս էր. Գանի մը ըրպէ ևս նստեցայ՝ հանդարտօրէն կացութեանս վրայ խորհելով. Ապա, վտանգով ուրիշ լուցկի մը, տեսայ որ աղեղնաձև ձեռքունով բարձր կամարի մը մէջ էի. Ընդարձակ տեղ մէջ ալ, ուր ազատ կըրնայի շնչել: Ու վարժուելով խաւարին, տեսայ որ տեղէ մը լոյս մը կուգար. Վեր նայեցայ; Այո, ձեռքունին վրայ, կանոնաւոր հեռաւորութեամբ, պղտիկ ծակէր, թողուած էին. սակայն գնդանին ներքեւի մասը—որովհետեւ այսպէս ըլլալու էր այդ—սեւ մթութեան մէջ թաղուած էր: Ոտքի ելայ. Պէտք էր տեսնել թէ ուր էի և այս գնդանը փախուստի ինչ յոյս ունէր—եթէ կար երբէք Յաջող նուազուն շող մը երեւան բերաւ—կմախք մը... Դանկը, իր անաչք խոռոչներով խոփոտութեամբ ինձ նայել կը թուէր... Ետ ընկրկեցայ, տակաւին աներկիւզ, Սակայն «Այո» խորհեցայ տխրութեամբ, սպանուած իշխանին կմախքը Հոս նստուած ըլլալու էր...»

Բայց բարոյախօսելու ատեն չէր. Մահ պիտի ըլլար թէ կեանք. ժամանակը կանցնէր, լուցկիներս լմնալու վրայ էին; Ո՛հ, իւրաքանչիւրը գովկամակութեամբ կը վառէի, սա-

կայն պէտք էր այս գնդանին ամէն անկիւնը քննել. եթէ էլ մը չկար, ալն ասեն պակեղով մեր տան տարաբախտ իշխանին քով՝ մահուան համար կազօթէի. Ան չէ՛ր ուշանար... ժամանակ կորսնցնելու չէի Մէկ անկիւնը դիպում կար, ինչ որ կերեւէր ինձ, փոքրիկ քարերու կոյտ մը, բայց, պլպլացող լուցկիս համապատասխան լոյսի մը հանդիպեցաւ. Այդ—ո՛չ, անկարելի էր—այո՛, երկրորդ լուցկի մը իրողութիւնը պարզեց, ոսկի էին ատոնք—ոսկի՛—ոսկի՛ի ձոյնը—որուն համար մարդիկ իրենց կեանքը կը ծախեն... Ոտքովս հրերցի գանձեք, «Բոլորը ի՛նչ է. այդ բոլորը կուտայի Աստուծոյ ազատ օղջ շնչելու—կիանքի՛ համար... ափսոս աւա՛ղ»! Ապա, վարսօք քրքրիւզ մը գոչեցի—«Ո՛չ, պիտի պահեմ որպէսզի ստոնցմով մաքսիմներ գնեմ Հայաստանի համար: Սիրեցեալս բաւ թէ ատոնցմէ քանի մը հատը կրնան մեր լիտնային անցքերը անտիկ դարձնել Պիտի պահեմ գանձեք Ո՛հ, Սիրելի մանս...»

(Շարունակելի)



ընդհարում չէ եղել որի մասին
ես կարծիք չառնեմ չը լինեմ,
կամ ինձ չը հարգողն : Եթէ
Վասմանին հաճելի է մենք այդ
էլ զօհիւմաններով կը հաստա-
տենք և ոչ թէ վէպեր հիւսելով :
Վասմանին հենց իրեն անձնական
նամակներէն ատենակներ մէջ
տեղ կարելի է գնել իմ ասած-
ները հաստատելու համար :

Հիմա հաստատենք որ Վասմ-
անը կազմակերպութեան կաս-
սան իր հօր կասսան է ընդունել,
անձամբ ինքնազուխկերպով թօ-
շակ է նշանակել իր ծնողքին և
խաչագողային հոգեբանութեամբ
ուզեցել է այդ իրողութիւնը
ձածկել իր ընկերներէն, Գաշ-
նակցութեան մարմիններէն : Եւ
մեր այս ասածները հաստատելու
համար դիմենք իրեն Վասմանի
նամակներին :

Ժընէվ, 8 հոկտեմբեր 97

Սիրելի Վարդ :

Վարդուց է որ կուզէի հարցնեմ քեզ
թէ ինչ միջոցներով կը զրկես քոնջ
պէտք եղած գումարը : կոմիտէի արկ
դէն : Ինչ աւուրնով այդ մասին ինչ
բացատրութիւն տւիր Կ. կոմիտէին :

Համարներով
Վ.

Ժընէվ, 9 դեկ. 97.

Սիրելի Վարդ :

Նամակդ ինչպէս եւ վերջին երկ-
տողը սասցայ. կը վախճամ որ քոնջ
չոր տունը վաղացուցած ըլլայ քեզ
ես իր կողմէն ներում կը խնդրեմ :
բայց միանգամայն երկու խօսք ալ
կաւելցնեմ իբր բացատրութիւն
(Կրող վարմունքը չքմեղացնելու
բացատրութիւններ են տրվում) :
Վասմանը ինքնազուխ կեր-
պով թոշակ էր նշանա-
կել իւր ծնողաց յեղափո-
խական կասսայից : և ինքը գի-
տակցելով իր արած քայլի մեծ
ապօրինութիւնը խաչագողային
հոգեբանութեամբ շէր ուզում որ
տեղական կոմիտէն և Կ. կոմիտէն
իմանայ այդ գառն իրողութիւնը
որը և ապացուցում է վերը զը-
րած նամակի կտորը :

Պարոն Վասման, այս խաչա-
գողային հոգեբանութեան ձեռ-
քովդ գրած վկայականը ձեռ-
քումս բռնելուց յետոյ, ինչ-
պէս ես յանդիման Վարդային
գրամաշորք անանել երբ նա իր
չը յանձնած գրամի մասին յայ-
տարարում է թէ՛ կոմիտէներին,
թէ՛ բիւրօներին և թէ՛ ամբողջ
աշխարհին դու գողի պէս
չես ուզում որ ոչ ոք իմանայ թէ
յեղափոխական կասսայից գրամ
ես վերցնում ծնողներդ համար,
և յանդիման ես մեզ գրամա-
շորք անանել որ չենք վստա-
հում քո հոգեբանութեամբ և
յատկութիւններով օժտված
մարդկանցից կազմված մար-
միններին գրամ յանձնել ինչ

իմանամ թէ ամեն մէկդ 40
հատ քոյրեր ու մայրեր չունէք
որոնք ապրել են և ապրում յե-
ղափոխական կասսայից :

Առ այժմ այսչափ երբ Վասմ-
անը կը վերջացնէ և Բալկան-
եան ներկայ Կ. կոմիտէից և Բիւ-
րօյից ստացած տեղեկութիւննե-
րի շարքը ու կը վերջացնէ իր
վէպը. մենք կրկին զօհիւման-
ներով կը գանք այդ խաչագողա-
կան ֆալանգայի զրպարտու-
թիւնները ջախջախելու :

ՎԱՐԴՈ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Խրգայի շէրիֆի հանգէսը տե-
ղի ունեցաւ առանց ու ե գէպ-
քի, ժողովուրդը խանդաղատա-
գին ծափահարած է Սուլթանը
ճամբուն վրայ :

—Նոյեմբեր 2ին Պոլսէն կը հե-
ռագրեն հետեւեալը .— Երէկ դես
պանական ժողովը Բ. Իրան յայտ
նեց Սակեդոնական գոնթրօլի
կանոնադրը. և թէ 48 ժամուան
մէջ շընդունուի ծովային ցոյցը
պիտի գործադրուի :

—Վրէննայէն կը հեռագրեն—
Թուրքիոյ դէմ ցոյց ընելու հա-
մար նշանակուած միջազգային
նաւատորմի ղեկավար զորավար
հաւաքուի անգլիական ծովակալ
Իերեսֆերի հրամանատարու-
թեան տակ : Արդէ վերջ անմի-
ջապէս պիտի սկսի խաղաղ կեր-
պով պլոքէ ընել խրքական ծո-
վեզները :

—Պոլսէն նոյեմբեր 2ին կը հե-
ռագրեն— Երկ ժամը 2ին մօտ
Ֆէհմի փաշային, պալատի դալտ
նի ոստիկանապետ, կառքով նի-
շան թաշ գացած պահուն, կառ-
քին ետեւէն ումբ նետուեցաւ :
Ռումըլը ինկեր է Իերայի Լիւք-
սէմպուրկ կաֆէին դիմացը : Շատ
մը ձերբակալութիւններ եղան :
պոմպա նետուած տեղը հայեր չը
գտնուելով, կը կարծուի թէ հա-
յերը չեն ընողը այլ Ֆէհմի փա-
շային բազմութիւ թշնամիներուն
գործնէ :

—Թուրք դատական իերթին
վերջին թիւը կը պարունակէ և
այն հրամանը որով կը հրամայ-
ուի ձերբակալել իբր թէ Սուլթա
նին մահափորձի գործին մասնակ-
ցութիւն ունեցող փախստական
անձերը : Այդ անձերը հետեւեալ
ները են .

- 1. Պելիքեական հպատակ տի
կին ժօրիս 35 տարեկան, որուն
ամուսինը կը մեղադրուի և ձեր-
բակալուած է :
- 2. Լիպա Ռիպս, կամ Սաֆօտ,
կամ Թիփօսիան, կամ Կօստան,
գին Կուպուլեան 40 տարեկան :
- 3. Տիկին Սօֆի Լիպա Ռիպս
կամ Մարի Զայշ 29 տարեկան :

4. Օրիորդ Ռապէնիաֆայի հա-
յուհի 27 տարեկան :

5. Ժօրժ Բիթրի Վարչամով,
իսկական անունը Գիրգօր Վար-
չամ, արապածին, հայ :

6. Ճարլ Իվանովիչ Էշվէտ, իս-
կական անունը Կարապետ Օհան-
եան 32 տարեկան :

7. Թրասէ Իվանիչ, կամ Թոր-
գոմ, իսկական անունը Արաշ-
Խաչիկ Գապտուան 30 տարե-
կան :

8. Տիկին Եշկուլա կամ Եշկուլա
35—40 տարեկան :

9. Սիլեօ Իսպարիճի, կամ
Քէօսէ Արիստեաի, կամ Գօշօ,
կամ Ալիօնս Վօզան, իսկական
անունը Վահան, 25 տարեկան :

10. Մկրտիչ Ղարիպեան Սար-
գիս կառապան :

11. Երվանդ Ֆրանկլիւեան 25
տարեկան :

12. Գարալ, Եալմաճի Միհ-
րան :

13. Յովակիմ և անասնաբուժա-
կան վարժարանի երկու աշակեր-
տեր :

14. Արչակ կամ Արտաշ 35 տա-
րեկան :

15. Արտօ գուշ, իսկական ա-
նունը Ամուճա Ելաճաճեան և Եր-
վանդ Ալիճաճեան կը բնակին
Ֆիլիպէ :

16. Թէթվուր Յակոբեան, Սօ-
ֆիա, Սօֆիայի մէջ մանրավա-
ճառ :

Այս անձերը ինչպէս և ձեր-
բակալուածները կը մեղադրուին
56րդ յօդուածին և 58ի յանե-
լումին առաջին մասին համաձայն,
որ մահուան պատիժ կը տնօրի-
նէ :

«Վեչ. Բօշթա»

Ո Ւ Ր Ք Ի Ա

«Բըլիւ օֆ րըվիւ» անգլիա-
կան հանդէսին խմբագրապետ
պարոն Ստէգ որ Ռուսիոյ մէջ
բանախօսութիւն մը ըրած էր
Տուճայի նկատմամբ, Անգլիա վե-
րագառնալուն առթիւ Պերլին
հանդիպելով խիստ տխուր գոյ-
ներքին վիճակը, ուրտեղ, ըսած
է բացարձակ անիշխանութիւն կը
տիրէ : ըստ խմբագրապետին
կարծեօք, Բօլսնիոյ մէջ քիչ
ժամանակէն ընդհանուր ապստամ-
բութիւն մը պիտի ծագի և պի-
տի ստիպէ որ Գերմանիան միջա-
մտէ իր սահմանադրութեանը ա-
պահովութեան համար :

Բօլսնիոյ 10 կուսակալութիւնը
մէջ պաշտման վիճակի ենթա-
կած են : Գրօնչգատի մէջ խա-
ղաղութիւնը հաստատուած է . ա-
պստամբ նաւազները Բրենց
զէնքերը յանձնած են : ըստ հը-
րամանի ծվային նախարարին,
ապստամբական մասնաւոր պայ-
մաններով, երկար ճամբորդու-

թիւն մը պիտի ընեն :

Ստէնա խաղաղած է : Շոգենաւ
ներու մէջ ապաստանող օտարազ-
գիներ կը վերագառնան կրկին
քաղաք :

—Թիֆլիզի երկաթուղեաց գոր-
ծադուր վերջացած է :

Վարչապետի մէջ վաճառական-
ները խումբեր կազմակերպած են
գործադուրի դէմ կուռելու հա-
մար :

—Բրէնս Միրսքի Թինլանտիոյ
կառավարիչ պիտի անուանուի
բրէնս Օպօլիսքիի տեղ որուն հը
րաժարականը ընդունուած է :

—Եղբըքիի թաղապետութեան
խորհրդակցներն կինը վեցհար-
ուածեանով թեւէն և փորէն ծան-
րապէս վիրաւորեց Գլինկէտէքի
կառավարիչը : սպանիչ կինը
կեղծ անունով կառավարիչին
սենեակը մտած էր :

—Վրթէ յայտնեց Սարին թէ
միմիայն բարենորոգումներ յայ-
տարարելը օգուտ մը չունենար,
այլ ինք պիտի գործադրէ զա-
նոնք բուն իսկ ժողովրդին օգտին
համար :

—Բօլսնիացիք պատգամաու-
րութիւն մը խրկելով Վրթէին
յայտնած են թէ Բօլսնիան խաղա-
ղելու համար պէտք է սահմանադ-
րութիւն մը և վարչական և օ-
րէնսդրական ինքնավարութիւն
մը :

—Բեթերսպուրկէն կը հեռագ-
րեն որ Վլատիվօսթօքի մէջ ար-
իւնտտ խժոճութիւններ տեղի
ունեցեր են, պահեստի ծովային
ղինւորները քաղաքը հրգեհեր և
թալանի տուեր են :

—Իշխան Ուրուսով, ազատա-
միտ, Թլերի նախկին նահան-
գապետ, ներքին գործոց նախա-
րարի օգնական կարգուած է :

ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

—)o(—

Պ. Գալֆաեանի Օթէլլօյի ներ-
կայացումը տեղի պիտի ունենայ
գալիք հինգշաբթի : Տոմսակ ծա-
խող յանձնախումբը արդէն կազ-
մուած է :

ԼՍՍՐԱՆ

—o—

Փառնայի երկսեռ հայ հասա-
րակութիւն կը հրաւիրուի ներ-
կայ գտնուիլ յարանական Ծր-
ժողովին, որ պիտի գումարուի
յառաջիկայ երկուշաբթի. 7 նորոյ-
ժամը 8 կէսին երեկոյեան, դպ-
րոցի սրահի մէջ :

Պիտի տեսնախօսէ Տ. Վահրամ
թահանայ Մարտիան նիւթ—կազ-
մուելիք Մարզական խումբի գոր-
ծերը :

Հայկ. բնիկից. Վարչութիւն
Վառնա